

# ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Posted on December 15, 2012 by Keghart



Category: [Opinions](#)



### **Հարցազրոյց՝ Պատմաբան, Դասախօս Դոկտ. Ժիրայր Քոչարեանի Հետ**

Համօ Մոսկովեան, Պերլին, 2 Հոկտեմբեր 2012

**Գիտարուեստական (թեքնիք) պատճառներով կարգ մը հայերէն գրութիւններ ստացուած թուականներուն չհրատարակուեցան: Ներողամտութիւն կը խնդրենք հեղինակներէն, յատկապէս Համօ Մոսկովեանէն որո՞ւ հարցազրոյցը Պերլինահայ Պատմաբան, Դասախօս Դոկտ. Ժիրայր Քոչարեանի հետ արեւմտահայերէն լեզուով կը ներկայացուի փոխանակ արեւելահայերէնի երիզագրութեան անյստակութեան պատճառով:-Խմբ.**

**ՀԱՐՑՈՒՄ.-** Վերջին շրջանին, բաւական կարեւոր իրադարձութիւններ տեղի ունեցան միացեալ Գերմանիոյ մայրաքաղաք Պերլինի մէջ, որոնք կը վերաբերին Հայ Դատին եւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման: Կարո՞ղ էք ներկայացնել զանոնք:

### **Հարցազրոյց՝ Պատմաբան, Դասախօս Դոկտ. Ժիրայր Քոչարեանի Հետ**

Համօ Մոսկովեան, Պերլին, 2 Հոկտեմբեր 2012

**Գիտարուեստական (թեքնիք) պատճառներով կարգ մը հայերէն գրութիւններ ստացուած թուականներուն չհրատարակուեցան: Ներողամտութիւն կը խնդրենք հեղինակներէն, յատկապէս Համօ Մոսկովեանէն որո՞ւ հարցազրոյցը Պերլինահայ Պատմաբան, Դասախօս Դոկտ. Ժիրայր Քոչարեանի հետ արեւմտահայերէն լեզուով կը ներկայացուի փոխանակ արեւելահայերէնի երիզագրութեան անյստակութեան պատճառով:-Խմբ.**

**ՀԱՐՑՈՒՄ.-** Վերջին շրջանին, բաւական կարեւոր իրադարձութիւններ տեղի ունեցան միացեալ Գերմանիոյ մայրաքաղաք Պերլինի մէջ, որոնք կը վերաբերին Հայ Դատին եւ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման: Կարո՞ղ էք ներկայացնել զանոնք:

**ՊԱՏՎԱԾՈՒՄ.-** Կը ցանկանայի քանի մը խօսք ըսել այսպէս կոչուած հայ-թուրք երկխօսութեան մասին՝ որ շատ կը հետաքրքրէ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը: Որովհետեւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը շուտով կը մօտենայ եւ իրենք բնաւ նպատակ չունին 2015-ին Ցեղասպանութիւնը որպէս այդպիսին ճանչնալ, կը փորձեն հայ-թուրք մակերեսային երկխօսութիւններ կազմակերպել: Այդ տեղի կ'ունենայ յայտնի կազմակերպութիւններու կողմէ՝ ինչպիսիս են «Նաուման» հաստատութիւնը՝ «Օյրօ» ակադեմիան, «Անատոլու Քուլթուր»: Դժբախտաբար Հայաստանի մէջ այդ խայծը կու տուած են եւ կու գան մասնակցելու այս միջոցառումներուն...: Այս բոլորին ֆինանսաւորողը արտաքին գործոց նախարարութիւնն է եւ պարզ է այդ բոլորին նպատակը: Ա. Համաշխարհային

Պատերազմի ավարտին երիտթուրք ոճրագործներուն փախցուցին Պերլին եւ թոյլ չտուին որ յանձնուէին Թուրքիոյ դատարաններուն, ուր դատապարտուած էին այդ ժամանակ, հեռակայ կարգով: Հիմա, Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը կը ֆինանսաւորէ այս միջոցառումները: Այնպէս որ հարկաւոր է նամակներ յղել բոլոր հայ կազմակերպութիւններուն, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, որ հրաժարին այսպիսի ծրագրուած խորհրդածողովներու մասնակցելէ...:

### **ՀԱՐՑՈՒՄ.- Ի՞նչ են Ձեր ծրագիրները:**

1915 թուին ձերբակալուած եւ արքայուած եւ ճանապարհին սպաննուած 15 գրողներու նիւթերը կը հաւաքեմ, Յեղասպանութեան 100-ամեակին տպագրելու համար՝ գերմաներէն լեզուով: Կը պատրաստեմ հայ ազգաբնակչութեան արթաս, 1978 թուի Պերլինի վեհածողովէն մինչեւ այսօր: Թէ ինչպէ՞ս պատահեցաւ որ այսօր միայն Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի տարածքներուն վրայ է որ հայեր կ'ապրին: Այդ 15 քարտէզները բացատրութիւններով կ'ուզեմ հրատարակել մինչեւ 2015 թուականը:

### **ՀԱՐՑՈՒՄ.- Ի՞նչ կրնաք ըսել Ազերի-Թուրք գործակցութեան մասին**

Մի քանի շաբաթ առաջ Հունգարիոյ դեսպանատան առջեւ բողոքի ցոյց կազմակերպուեցաւ, բողոքի նամակներ յղուեցան Եւրոպական յանձնաժողովներու՝ բողոքելով ազերի ոճրագործ սպայ Սաֆարովի ազատ արձակման հարցով: Գերմանիոյ մէջ շատ ընելիքներ կան: Թուրքերը շատ կազմակերպուած են հոս եւ հակա-հայկական քարոզչութիւն կը տանին պետական մակարդակով: Թրքական դեսպանատան մէջ կ'աշխատին պաշտօնեաներ այդ ուղղութեամբ...:

Հումպուլտի համալսարանի փողոցին վրայ յուշատախտակ տեղադրուեցաւ Կոմիտասի յիշատակին. փիլիսոփայութիւն ուսանած էր : Ողջունելի քայլ էր, սակայն նոյն համալսարանին մէջ ազրպէյճանագիտութեան, լեզուի ու մշակոյթի ամպիոն հիմնած են ազերիները: Միւս կողմէ Պերլինի «Ֆրայ» համալսարանը միանգամընդմիջտ փակեց հայագիտական ուսումնասիրութիւններու ամպիոնը...: Այսինքն՝ ազրպէյճանցիները կը տեղաւորուին մայրաքաղաքին մէջ, իսկ հայեր...:

Այս քաղաքին մէջ 300-350,000 թուրք կայ: Մեր Հայաստանի հայկական հատուածը թուրքին ինչ ըլլալը լաւ չի պատկերացներ. նենգ ու խորամանկ ոճրագործ մըն է ան: Մանաւանդ այն թուրքերը որոնք այստեղ ծնած են, անոնք թրքական կառավարութեան երկարացուած ձեռքերն են...:

Փառք Տիրոջ, այստեղ ունինք մի քանի գերմանացի բարեկամներ, Յեղասպանութեան ճանաչման խմբակ որ Թեսա Հոֆմընի գլխաւորութեամբ մեծ աշխատանք կը տանի:

### **ՀԱՐՑՈՒՄ.- Ի՞նչ կը թելադրէք:**

Եթէ դրամական հաստատութիւն ըլլայ, որքան կարելոր է Գրիգոր Պալաքեանի «Հայ

Գողգոթան» թարգմանուի գերմաներէնի... կամ Սողոմոն Թեհլիրեանի «Իմ Յիշողութիւնները», որոնք մեծ ազդեցութիւն պիտի ձգեն գերմանական նոր սերունդին վրայ, որ քննադատաբար կը վերաբերի իր պատմութեան հանդէպ: Տեղացի ժողովուրդին չենք փորձած ծանօթացնել իրողութեան հետ: Այս օրերուն, Թեսսա Հոֆմըն պիտի ներկայացնէ Պոնտոսի եւ Թրակիոյ յոյն ժողովուրդին հանդէպ գործուած Ցեղասպանութիւնը: Թող աշխարհը իմանայ, որ թուրքը Ցեղասպանութիւններու շարքի գործադրող ոճրագործն է: Պետք է Պարսկաստանին եւ Ռուսաստանին հասկցնել թէ ան կը շարունակէ փան-թուրքիզմի քաղաքականութիւնը:

Ա. Համաշխարհային Պատերազմի աւարտին, Պերլին փախած թուրք ցեղասպան- ոճրագործներ Ճեմալ Ազմին, Պեհաւետտին Շաքիրը, Թալաաթ փաշան շանսատակ եղած էին հայ վրիժառուներու ձեռքով: 1940 թուին Թալաաթի աճիւնը Թուրքիա տեղափոխուեցաւ մե՛ծ շուքով...: Իսկ այստեղի թուրքերը, մեծ գումար հաւաքելով, մնացեալ երկու ոճրագործներուն գերեզմանները պատեցին թանկարժէք մարմարով, կողքին կառուցելով շքեղ մզկիթ մը, զոր կոչեցին “Նահատակ”ներու անունով: Մենք բողոքի նամակ յղեցինք այդ շրջանի թաղապետին, բողոքելով ոճրագործներու պաշտամունքի դէմ, բայց մինչեւ այսօր պատասխան չստացանք: Ինչպէ՞ս կ’ըլլար եթէ Նացիզմի ռազմական ոճրապետեր Հիթլերն ու Հիմլերը, անհատի պաշտամունքի առարկայ դառնային այսօր` Գերմանիոյ մէջ:

Պերլինը ամէն հարցով կապուած է հայոց պատմութեան հետ:

